

ՆՐՈՍ ՄՈՐ ՄԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅԻՇԱՏԱԿԻ ՏՊԱԽՈՐԻԶ ՈԳԵԿՈՂՈՒՄ

Երբև տարիներ առաջ, Լոս Անճելլոսի մէջ, անակեղաօրէն մահացած էր «Հերոս Մարին», որուն երախտապարտ հինգ զաւակներն ու զաղափարի ընկերները, 24 Յունիս 1994, Ռոբբար քրեկոյնան ժամը 7ին, Սահակեան Լեւոն Միրտիչեան Դոլէնի շրջափակէն ներս յիշատակի ոգեկոյման հանդիսութիւն մը սարճած էին, ներկայութեամբ հարազատներուն, ընտանեկան բարեկամներուն եւ զաղափարակից ընկերներուն:



Հերոս Մարի Չիլիեկիրեանի. նուիրում գիրքին կողքի Գեարգ

Իրրեւ հարազատ՝ ոգեկոյման հանդիսութեան բացումը կատարելու պարտականութիւնը վիճակուած էր համաճումն գոյնի տնօրէն Պր. Պէպօ Սիմոնեանին, միաժամանակ վարելով նախաձրագրուած կոկիկ յայտագիրը: Օրուան գլխաւոր «վկայողն» էր Տիկ. Մաքրուի Թայատուրեան, Լաչաձնոթ Մարիին՝ սատանեկան օրերէն միջեւ իր մահը: Զոյգ խօսողները զուսպ կերպով Մարին ներկայացուցին իրրեւ մայր ամէն բանէ առաջ, իրրեւ ընկերութեան մէջ զարծօն վեր վերցնող եւ այդ «գծով» Լաչաձնոթ հայուհի: Զօ Պարտուրեանի ընկերակցութեամբ երկու երգ մեներգեց Մարիին շնորհալի դուստրը՝ երջուէի Սիլվան, իսկ փակման եւ շնորհակալական խօսով հանդէս եկաւ՝ Աստուածարանութեան բարձրագոյն որդիներուն հասնելու ձգտող երիտասարդ տղան՝ Լրայը, որուն համար «Մնող մը յարգելու սիրել կը նշանակէ զԱստուած յարգելու սիրել: Մայր եւ հայր սրբութիւններ են, հետեւաբար, ներկայ աշխարհին մէջ ամենէն կարեւորը լա՛ւ զաւակ ըլլալն է»:

Արդարեւ, շա՛տ յուզիչ, տղաւորիչ եւ մա՛նաւանդ դաստիարակիչ էր այս հանդիսութիւնը, երբ նկատի ունենանք թէ մայր մը մեծարելու երեսը շատ աւելի գերակշիռ էր Լան՝ հերոսը... որուն կազմակերպիչներն էին նախ իր զաւակները, ապա՝ իրրեւն ու փեսաները, ի վերջոյ՝ զաղափարի ընկերները:

Մեր այն մայրերը, որոնք, ո՛չ թէ ՍԳԱՍՈՒՂԻՆԵՐՈՎ այլ՝ ՍԳԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ ընկելով զաւակ մեծցուցած են, մէյմէկ անգէն հետեւներ եղած են, արժանի՝ զաւակներուն գուրգուրանքին ու գնահատանքին, որոնցմէ Լանի՝ հողին նմանօրինակ ոգեկոյման արժանացած է, կա՛մ կենդանութեան՝ մեծարուած...:

Այսօրուան հանդիսութիւնը պատգամ մը ունէր, ուղղուած՝ զաւակներուն, թէ պէտք է յարգել ու մեծարել ծնողները, զանոնք սկստ չէ՛ անտեսել: Միայն եւ անընդունելի է եկեղեցիին մէջ տրուած այն պատգամը, թէ «Հայրդ եւ մայրդ ձգէ ու կնոջդ հետեւն գնա»: Թէեւ, կի՛ն արարածը, իր ամուսնութենէն ետք ա՛յլ աւելի կը փարի իր ծնողիին, տղան են որ ամուսնութեան «Մուրթ պատգամին» հաւատարմօրէն կը հետեւին...:

(Նրբ Լրայը ինք բարձրացաւ եւ հա՛յ մօր, հա՛յ ծնողիին գովելը հիւսեց՝ ներկաներէն շատելուն աչները տամկեցան, լուսօրէն արտասուելիցին: Երբ ինքնուրու... որովհետեւ...):

Այս՝ ճոխիքով: «Հերոսութիւն Մարի Չիլիեկիրեանի» զաւակները նոյնանուն 80 էջեց գրքով մը յոյս ընծայած էին, որուն մէջ, կարգ մը գրողներուն կողմէ վեր առնուած էր Մարիին խիզախութիւնը՝ իր հօր՝ Հերոս Աստուոր Մաչեանի կերպարով:

Այսօրուան հանդիսութեան երկրորդ պատգամը (որ բացէն շրտեցաւ) այն էր որ ծնող մը հետեւէն-հետեւ չի սիրուիր այլ՝ մօտէն (ըսել չենք ուզելով՝ ծունկիդ առջեւէն):

Չեւակերպութեան համար սարճուած «հոգեհանգիստ»ները կ'անհանգստացնեն այն ծնողները որոնք, իրենց ողջութեան՝ անտեսուած են իրենց զաւակներուն կողմէ:

Հա՛յ մայր ըլլալը ինքնին «հերոսութիւն» է: Մեր մայրերը կրկնա՛յ «հերոս» կ'ըլլան երբ լծուին ազգային առակելութեան մը, շատ իշխելով՝ զենքով, շատեր՝ ազգային որեւէ հաստատութեան մը մէջ ընկերային ծառայութեան լծակից դառնալով: Մեր Մարին թէ՛ զենք ունեց, թէ՛ կանաչիական շարժում ղեկավարեց եւ թէ՛ զաւակներուն ապագան երաշխաւորելու համար Ովկիանոսը անցաւ, եւ ուր, ուրախ հաւանորթի մը ընթացքին սիրտը դաղորեցաւ բարախելով: Մարին միշտ ուրախ էր, խնդալ գիտէր, ուրախ մընդորտ ստեղծելու բնածին յատկութիւն մը ունէր: Երբ ինքզինք գրականութեան նուիրած ըլլար՝ առանց չափազանցութեան երգիծագիր մը կրնար ըլլալ: Սրէ տղայ ծնէր՝ շատ մը կեղծ-հերոսներուն հերոսութեան դասեր կու տար:

Այսպէ՛ս նաեւ Մարին, թէ՛ ազգականական յարաբերութեանց ընթացքին եւ թէ՛ ընկերային շրջանակէն ներս:

Բազմաթիւ ներկաները ի վերջոյ պատուեցան շատ նոյս հիւրասիրութեամբ: